ՀՈՎՀ.ՇԻՐԱԶԻ ԱՆՎԱՆ Հ.169 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ Ի Գ

ԴԱՍՎԱՐ՝ ՌՈԶԱ ՍՈՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր բովանդակությունը

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Ուսումնական տարվա ընթացքում ուշադրություն դարձնել աշակերտական կոլեկտիվի կազմավորմանը: Լուծել կրթության և ուսուցման հետ կապված խնդիրները: Ստեղծել ամուր կապ դպրոցի և ընտանիքի միջև: Ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող հարաբերությունները ձևավորել առողջ համագործակցային մթնոլորտում:	Ուստարվա ընթացքում
2.	Անհատական դիտարկումներ՝ երեխաների հետ ծանոթացման, բնավորության առանձնահատկությունների բացահայտման նպատակով:	Ուստարվա ընթացքում
3.	Համագործակցել ծնողների հետ՝ ծնող-դպրոց կապի ապահովման նպատակով:	Ուստարվա ընթացքում
4.	Իրականացնել դաստիարակչական բազմաբնույթ աշխատանքներ՝ տարբեր մեթոդների կիրառմամբ՝ դասարանական կոլեկտիվ ձևավորելու նպատակով:	Ուստարվա ընթացքում
5.	Հետաքրքրաշարժ միջոցառումների, մրցույթների ու ցուցահանդեսների անցկացում:	Ուստարվա ընթացքում
6.	Համագործակցել ծնողների հետ՝ ծնող-դպրոց կապի ապահովման նպատակով:	Ուստարվա ընթացքում
7.	Հիշարժան էքսկուրսիաների կազմակերպում:	Ուստարվա ընթացքում

Հայեցի դաստիարակություն խնդիրներ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Սովորողների մոտ մշակույթի նկատմամբ հետաքրքրության ձևավորում: Նրանց հոգևոր պահանջմունքների, ճանաչողական ակտիվության և ինքնուրույնության զարգացում:Սովորողների հոգևոր ներաշխարհը հարստացնելու համար քննարկել մանկագիրների ստեղծագործությունները և հերոսների օրինակով բացահայտել օրինակելին ու պարսավելին:	Ուստարվա ընթացքում

Գեղագիտական դաստիարակության խնդիրները

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը, գեղեցիկը տեսնելու, ըմբռնելու, գնահատելու և ստեղծելու կարողությունը:Սովորեցնել նկատել լավն ու գեղեցիկը, ազնիվն ու բարին, պարսավել բացասական երևույթները: Գեղագիտական դաստիարակությունն ապահովելու նպատակով կազմակերպել էքսկուրսիաներ՝ թանգարաններ, թատրոններ:	Ուստարվա ընթացքում

Ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	«Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել» կարգախոսի միջոցով բացատրել, պատմել մեր	Ուստարվա ընթացքում

	հայրենիքի անցյալի մասին, մեր հերոսների մասին, որոնց շնորհիվ եղել ենք,կանք ու կլինենք: Ներկայացնել հայ ժողովրդի հերոսական անցյալը, պատմել նրա անկոտրում կամքի մասին:	

Ֆիզիկական դաստիարակության խնդիրները

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Զարգացնել սովորողների ֆիզիկական դաստիարակության պայմանները,արթնացնել սեր դեպի սպորտը, որը առողջ ապրելակերպի երաշխիքն է:	Ուստարվա ընթացքում

Աշխատանքային դաստիարակության խնդիրները

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Զարգացնել սովորողների աշխատանքային կարգապահությունը, ինքնուրույն մտածելակերպը: Զարգացնել, ընդլայնել աշխատանքային հմտություններն ու ունակությունները: Արթնացնել սեր աշխատանքի հանդեպ:	Ուստարվա ընթացքում

Բնապահպանական դաստիարակության խնդիրները

Հ/h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Բնության անբաժանելի մասնիկը մարդն է, Սովորողներին այնպես դաստիարակել, որ պահպանեն յուրաքանչյուր ծառ, թուփ, մշակեն և հոգատար վերաբերմունք դրսևորեն բնության հանդեպ:	Ուստարվա ընթացքում

Դպրոց-ընտանիք կապը

Հ/h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	

1.	Հաջող գործունեություն ծավալելու համար ամուր կապ ստեղծել դպրոցի և ընտանիքի միջև:Ծնողներին հրավիրել մասնակցելու դպրոցում ընթացող աշխատանքներին և միջոցառումներին:Հաճախակի կազմակերպել քննարկումներ ծնողների հետ, լսել մտահոգող հարցերը, գտնել համատեղ լուծումներ, կատարել փորձի փոխանակում, մանկավարժահոգեբանական խորհրդատվություն, ինչը կնպաստի սովորողի անձնային որակական հատկանիշների ճիշտ ձևավորմանը:	Ուստարվա ընթացքում	

Կազմակերպչական աշխատանք

/Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնoրինությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն/**:**

Հ/հ	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման Ժամկետը**	**Կատարող**
1.	Աշխատանքային պլանի կազմում:	Օգոստոս	Դասղեկ
2.	Դասագրքերի բաշխում:	Օգոստոս	Դասղեկ,գրադարանավար
3.	Դասասենյակի կահավորում :	Օգոստոս	Դասղեկ,տնտեսվար,ծնողներ
4.	Սովորողների անձնական գործերի կազմում:Կազմակերպել ծնողի և դպրոցի միջև պայմանագրի կնքման աշխատանքները:	Սեպտեմբեր	Դասղեկ
5.	Սովորողներին ծանոթացնել դպրոցական կարգապահությանը:	Սեպտեմբեր	Դասղեկ

6.	Սովորողների հաճախումների ամենօրյա հաշվառում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ
7.	Դասագրքերի վիճակի ստուգում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,գրադարանավար
8.	Սովորողների վերաբերյալ պահանջվող տվյալների հավաքագրում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ
9.	Պարզել, թե դասարանի սովորողները ինչ արտադասարանական խմբակներ են հաճախում:	Սեպտեմբեր	Դասղեկ
9.	Սովորողների առաջադիմության մասին հաշվետվության կազմում:	Ուստարվա ավարտ	Դասղեկ
10.	Ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հաշվետվության կազմում:	Ուստարվա ավարտ	Դասղեկ

ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

/Դաստիարակչական աշխատանքների կազմակերպում և իրականացում դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով դասավանդող մյուս ուսուցիչների հետ/:

Հ/հ	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Կատարող**
1.	Հավաքագրել սովորողների մասին տեղեկություններ. պարզել նրանց ընտանիքների սոցիալական կարգավիճակը:	Սեպտեմբեր	Դասղեկ
2.	Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին հնարավորության սահմաններում տրամադրել	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ծնողներ

	աջակցություն:		
3.	Դասարանի սովորողներին ընդգրկել համադպրոցական միջոցառումներում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ, ԴԱԿ
4.	Ուսման մեջ ետ մնացող սովորողներին ցուցաբերել աջակցություն:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ուսուցիչներ,սովորողներ
5.	Բացահայտել շնորհալի սովորողներին և ըստ իրենց կարողությունների ընդգրկել համադպրոցական միջոցառումներում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ԴԱԿ,ուսուցիչներ

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

/Ծնողների հետ առողջ համագործակցային աշխատանքը նպաստում է սովորողների նկատմամբ հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը /:

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1.	Կատարել ծնողական խորհրդի կազմի ընտրություն:	Սեպտեմբեր	Դասղեկ, ծնողներ
2.	Ծնողներին ընդգրկել միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպման աշխատանքներում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ծնողներ
3.	Կազմակերպել քննարկումներ սովորողներին վերաբերվող խնդիրների լուծման նպատակով:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ծնողներ
4.	Հաճախակի կազմակերպել սեմինար-խորհրդատվություններ:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ծնողներ
5.	Պարբերաբար հրավիրել ծնողական	Ուստարվա	Դասղեկ,ծնողներ

	ժողովներ:	ընթացքում	

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ

/Համագործակցության միջոցով նպաստել աշակերտների ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը, հոգեբանական բարդույթների հաղթահարմանը/:

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1.	Դասավանդող ուսուցիչներին տեղեկացնել դասարանի հոգեբանական մթնոլորտի մասին:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ
2.	Պարբերաբար զրուցել ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ուսուցիչներ
3.	Կազմակերպել քննարկումներ սովորողներին վերաբերվող խնդիրների լուծման նպատակով:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ուսուցիչներ
4.	Պարբերաբար կատարել դասալսումներ:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ
5.	Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ՝ ապահովելով դասավանդող ուսուցիչների մասնակցությունը:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ուսուցիչներ,ծնողներ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր	Ընդունել աշակերտներին: Կազմակերպել աշակերտների անձնական փաստաթղթերի վարման աշխատանքները: Դպրոց նոր մուտք գործած աշակերտներին ծանոթացնել դպրոցին: Ծավալել զրույց «Մեր դպրոցը» թեմայով: Զրուցել օրվա ռեժիմի,աշակերտական վարքի կանոնների մասին: Զրուցել անձնական հիգիենայի կանոնների պահպանման մասին: Դասասենյակի կահավորման և կանաչ անկյան հարստացման աշխատանքների կազմակերպում: Խոսել ազգային հերոսների մասին:	Դասղեկ Սովորողներ	
Հոկտեմբեր	Հետևել աշակերտների հաճախումներին: Աշակերտներին ներկայացնել քաղաքավարության կանոնները: Ծանոթանալ ճանապարհային երթևեկության կանոններին: Կազմակերպել քննարկում «Ինչպես անցնել փողոցը» թեմայով: Զրույց «Իմ ուսուցիչը» թեմայով: Ուսուցիչներին նվիրված երգի ուսուցում: Զրույց «Երևանն իմ տունն է» թեմայով: Երևանին նվիրված երգերի ունկնդրում: Նախապատրաստվել «Աա» հնչյուն-տառի ուսուցման տոնակատարությանը:	Դասղեկ Սովորողներ	

	Կազմակերպել հեքիաթի ընթերցում և քննարկում:		
Նոյեմբեր	Հետևել աշակերտների հաճախումներին: Ուշադրության կենտրոնում պահել թույլ կարողություններ ունեցող աշակերտներին: Զրույց «Սիրիր բնությունը» թեմայի շուրջ: Նկարել «Ոսկե աշուն»: Զրուցել տարվա եղանակների շուրջ: Զրույց «Կենդանիները մեր բարեկամներն են» թեմայով:	Դասղեկ Սովորողներ	
Դեկտեմբեր	Հետևել աշակերտների հաճախումներին: Ուշադրության կենտրոնում պահել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին: Ցուցաբերել անհատական մոտեցում դասարանի բոլոր աշակերտներին: Զրույց «Թռչունները մեր բարեկամներն են» թեմայով: Ծանոթանալ չվող և ձմեռող թռչուններին: Զրույց «Ձմեռ» թեմայի շուրջ: Հանձնարարել նկարել «Ձմեռ» և կազմակերպել նկարների մրցույթ: Ցերեկույթ տոնածառի շուրջ.«Գալդ բարի,Նոր տարի»: Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:	Դասղեկ Սովորողներ	
Հունվար	Աշակերտներին նախապատրաստել երկրորդ կիսամյակին: Զրույց «Ինչպես եմ անցկացրել ձմեռային արձակուրդները» թեմայով: Զրուցել Հայոց բանակի մասին և աշակերտներին սերմանել հայրենասիրություն: Կազմակերպել նկարի մրցույթ «Մեր բանակը» թեմայով:	Դասղեկ Սովորողներ	

Փետրվար	Ուշադրություն դարձնել աշակերտների ուսման առաջադիմությանը: Հետևել աշակերտների պատրաստվածությանը դասերին: Հետևել դասագրքերի խնամքին և գրենական պիտույքների առկայությանը: Զրույց «Գիրքը իմ բարեկամն է» թեմայով: Զրույց «Մենք վստահում ենք և անկեղծորեն մեր սրտերն ենք բացում» թեմայով: Դաստիարակել անկեղծություն և վստահություն: Զրույց «Բարեկամը, ընկերը ամենամեծ հարստությունն է» թեմայով: Հեքիաթի ընթերցում և քննարկում:	Դասղեկ Սովորողներ	
Մարտ	Հետևել աշակերտների հաճախումներին: Ապահովել մշտական կապը ծնողների հետ: Հետևել աշակերտների պատրաստվածությանը դասերին: Հետևել դասագրքերի խնամքին և գրենական պիտույքների առկայությանը: Զրույց «Դռները բացեք, գարուն է գալիս» թեմայով: Գարնանային թեմաներով նկարների մրցույթ:	Դասղեկ Սովորողներ	
Ապրիլ	Հետևել աշակերտների պատրաստվածությանը դասերին: Հետևել դասագրքերի խնամքին և գրենական պիտույքների առկայությանը: Զրույց «Մեր մայրիկները» թեմայով: Պատրաստել բացիկներ մայրիկների և տատիկների համար: Զրույց «Իմ իրավունքներն ու պարտականությունները» թեմայով: Դաստիարակել աշխատասիրություն: Կազմակերպել քննարկում	Դասղեկ Սովորողներ	

	«Աշխատանքը մայրն է ամեն բարիքի» թեմայով: Աշակերտների մոտ ձևավորել փոխօգնության մթնոլորտ: Զրույց «Ինչն է լավ, ինչը՝ վատ» թեմայով: Զրույց «Ինչն է ամենագեղեցիկը ինձ համար» թեմայով:		
Մայիս	Հետևել աշակերտների պատրաստվածությանը դասերին: Հետևել դասագրքերի խնամքին և գրենական պիտույքների առկայությունը: Զրույց «Իմ սիրած հեքիաթը» թեմայի շուրջ: Հեքիաթի բեմականացում: Սովորեցնել հետևել շրջակա միջավայրի մաքրությանը: Այցելել տիկնիկային թատրոն: Կազմակերպել հայրենասիրական երգերի ունկնդրում: Զրույց «Ես ազատ ու անկախ Հայաստանի մի ծիլն եմ» թեմայով: Ամփոփել երկրորդ կիսամյակի արդյունքները: Քննարկել ամառային արձակուրդների ընթացքում նախատեսվող աշխատանքները: Կազմակերպել էքսկուրսիա դեպի Օշական:	Դասղեկ Սովորողներ	